

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ — ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ  
Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ք. ՄԱՐՏՈՒՆԻ

2021թ.

## Հետազոտական աշխատանք:

Մեփական փորձառության զարգացման և առկա խնդիրների լուծման յուրօրինակ տարբերակ էր առաջարկված հետազոտական աշխատանքը: Ուսումնառության ընթացքում առաջանում են բազմապիսի ու բազմաբնույթ խնդիրներ, որոնք կարող են կապված լինել թե՛ ուսումնական պրոցեսի և թե՛ կազմակերպչական ու կարգապահական աշխատանքների հետ: Նկատվող խնդիրները, որոնք առկա են ուսումնառության ընթացքում, պետք է հաղթահարվեն վարպետ ուսուցչի կողմից: Ուսուցիչը նախ պետք է կարողանա նկատել ու տարբերակել խնդիրը, տալ դրա հստակ բնորոշումը, այնուհետև ելնելով ուսումնառության արդյունավետ բարձրացման անհրաժեշտությունից առաջարկի հետազոտության արժանի խնդրի լուծման ճանապարհը: Իհարկե ինքնին հետազոտական պրոցեսն արդեն հուշում է, որ այն ճիշտ իրականացնելու, դրված նպատակին հասնելու համար ուսուցչից պահանջվելու է մանկավարժական, մեթոդական, մասնագիտական խորը գիտելիքներ: Հաշվի առնելով նկատված խնդրի բոլոր առանձնահատկությունները (միջավայր, տարիքային խումբ, մոտիվացիա, ուսումնառության նկատմամբ հակումներ և այլն) ուսուցիչը մշակում է գործողությունների պլան-գրաֆիկ: Այստեղ տեսանելի են ինչպես օգտագործվող գիտելիքներն ու մեթոդները, այնպես էլ իրականացվող հետազոտության թիրախային խմբերն ու ժամկետները: Մշակվում են տեղեկույթի հավաքագրման եղանակները՝ կախված նպատակից: Այնուհետև սահմանված պարբերականությամբ թիրախային խմբին տրվում են առաջադրանքները, որոնք ապահովում են ինչպես մուտքային տվյալները, որը ցույց է տալիս արդյո՞ք խնդիրը ճիշտ է ձևակերպված ու նկատված, այնպես էլ հետազոտական աշխատանքի շարունակականությունը: Կատարված աշխատանքները (գրավոր կամ բանավոր) պետք է տրամաբանորեն հաջորդեն ու լրացնեն մեկը մյուսին: Հավաքագրված տվյալները ստացվում և ամփոփվում են հետազոտող ուսուցչի կողմից: Այս ընթացքում ցանկալի է համագործակցել, խորհրդակցել գործընկերների հոտ, ովքեր կարող են իրենց փորձառությամբ օգնել հետազոտող ուսուցչին: Հավաքագրված տեղեկույթը վերլուծելուց, ստացված նախորդ և հաջորդ արդյունքները համեմատելուց հետո հետազոտող ուսուցիչը ստացված վերջարդյունքներից կարող է հանգել եզրակացության. հասնել է արդյոք իր նպատակին:

Հետազոտական աշխատանքն ուսուցչի համար ունի զարգացնող բացառիկ նշանակություն: Հետազոտության ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ նոր գաղափարներ, խնդիրների լուծման ուղիներ, որոնք կարելի է կյանքի կոչել ուսումնառության ընթացքում կամ հաջորդ

հետազոտական աշխատանքի ժամանակ: Հետազոտական աշխատանքը հետազոտող ուսուցչին ինքնագնահատականի և ինքնագարգացման հնարավորություն է տալիս, որի արդյունքում ինքնաքննադատ ուսուցիչը ինքնադիտարկմամբ կարող է վեր հանել իր ուժեղ կողմը կողմերը: Հետազոտական աշխատանքը ինքնին կարող է բացահայտել այլ խնդիրներ,

որոնք նույնպես պետք է գտնվեն ուսուցչի ուշադրության կենտրոնում: Եվ ի վերջո հետազոտությունը հավաստի ու օգտակար տեղեկույթ է պարունակում, որը կարևոր ռեսուրս է դպրոցի ու ուսուցչական համայնքի համար:

### Հետազոտական աշխատանքի ուղեցույց

Կետերը նախանշում են հետազոտության օրինակելի կառուցվածքը և ներկայացման պարտադիր բովանդակային պահանջները:

#### **1. ՆԱԽԱԲԱՆ**

Հստակ ձևակերպել խնդիրը, դրանից բխող հարցը և ձեր մտադրությունը / էլքային փոփոխությունը:

*Հարցը պետք է լինի հետազոտելի, և այդ հարցում կարող եք ակնկալել վերապատրաստող դասախոսի և գործընկերների խորհրդատվությունը:*

#### **2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ/ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ**

Այստեղ պետք է անդրադառնալ հիմնահարցին նվիրված և հետազոտական արժեք ունեցող 3-10 աշխատության:

*Որպես առավելություն կդիտարկվի հետազոտվող հարցի շուրջ ձևավորված բազմակարծության և լուծումների համար տարբեր ռազմավարությունների /գործիքների կիրառման քննությունը/ վերլուծությունը:*

#### **3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ**

Պետք է ներկայացվի հետազոտության համատեքստը՝ նեղ (դասական) և լայն (դպրոց և/կամ համայնք և/ կամ հասարակություն) իմաստներով, հետազոտողի դիրքավորումը, թիրախային խումբը/խմբերը, նախատեղվող միջամտություն(ներ)ը, հավաքագրվելիք տվյալները և հավաքագրման եղանակ(ներ)ը:

#### **4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ**

Հետազոտության ընթացքը բացի բուն նկարագրությունից պետք է արտացոլվի նաև հավելվածներում՝ պարտադիր և կամ ընտրական: Պարտադիր հավելվածը հոտազոտական միջամտության փորձարկումը ներառող դասապլաններն են:

Որպես հավելված կարող են ներկայացվել վկայություն(ներ) պարունակող կամ հաստատող

տարատեսակ տվյալներ.

- աշակերտների կողավորված աշխատանքները,

- հարցախույզներն ու հարցաթերթիկները,
- գրույցների կամ հարցագրույցների սղագրությունը,
- այլ վկայություններ

Հետազոտության ընթացքի նկարագիրը պետք է ներառի նաև միջանկյալ արդյունքներն՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական, և դրա հետևանքով ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ կատարված շտկումները:

## 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մշակած և վերլուծված տվյալներն պետք է ներկայացվեն տեքստային շարադրանքի տեսքով, որը նաև կարող է պարունակել գծային տարբեր ձևաչափեր (աղյուսակներ, գծապատկեր և այլն): Դրանք միջոցով պետք է տեսանելի լինեն վկայությունների չափման արդյունքները, իրենց բացարձակ և հարաբերական դրսևորումներով:

## 6. ԱՄՓՈՓՈՒՄ

Այս մասում ամփոփվում է վկայություններով հիմնավորված եզրակացությունները: Շատ կարևոր է, որ դրանք ներկայացվեն նախաբանում առաջ քաշած մտադրությունների և ակնկալվող փոփոխությունների համադրությամբ:

### ❖ ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Այլ մարդկանց մտքերը, գաղափարները, նյութերը օգտագործելիս պարտադիր պետք է վերաձևակերպել և հղում կատարել: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է նաև մեջբերել այլ աղբյուրում հանդիպած բառը, նախադասությունը կամ պարբերությունը, սակայն անպայման նշելով հեղինակին, տարբերիվը և էջը:

Գրագողություն է համարվում առանց համապատասխան հղում կատարելու տվյալ հեղինակի մտավոր աշխատանքի օգտագործումը, որը խստիվ արգելվում է:

*Հետազոտական աշխատանքի ողջ ընթացքը ուղղորդվում է վերապատրաստող դասախոսի կողմից:  
Ակտիվ հետադարձ կապի միջոցով (ուսուցիչ-վերապատրաստող) դիտարկվում է ողջգործընթացը:  
Մանկանված ժամկետում ավարտական աշխատանքը հանձնվում է վերապատրաստող դասախոսին:*

*Հետազոտական աշխատանքը պահպանվում է վերապատրաստող կազմակերպությունում, իսկ անհրաժեշտության սեպքում ներկայացվում է ՀՀ ԿԳՄՄՆ:*

	Թեման	Ժամը		Վերջնարդյունքներ	Ծանոթություն
8. 1	Ավարտական հետազոտական աշխատանք	18 ժամ			
		Տ	Գ		
		7	11		
8. 1. 1 8. 1. 2	Հետազոտական աշխատանքի թեմաների ընտրություն:	1	1	Կիմանա ուսուցչի հետազոտված աշխատանքի կարևորությունն ու ընդհանուր կառուցվածքի մասին:	
8. 1. 3	Խորհրդատվություն:	1		Կկարողանա 1. կարևորել հետազոտական աշխատանքի ձևերը՝ համարելով այն ուսուցչի ինքնազարգացման, մասնագիտական աճի, խնդիրների լուծման կարևոր նախապայման	
8. 1. 4 8. 1. 5	Հետազոտական աշխատանքի կատարում (ինքնուրույն աշխատանք):	1	1	2. կարևորել հետազոտական աշխատանքի նպատակները, դրա միջոցով ուսումնասիրվող խնդիրների էությունը 3. սահմանել հետազոտական աշխատանքի միջոցով ուսումնասիրության ենթակա ուսումնական, մանկավարժական խնդիրները	
8. 1. 6 8. 1. 7	Հետազոտությունը պետք է ուղղված լինի ուսուցչի աշխատանքում հանդիպող կոնկրետ ուսումնական, մանկավարժական խնդրի լուծմանը:	1	1	4. ընտրել առաջարկվող ցանկից որևէ խնդիր կամ սահմանել իր կողմից դիտարկվող այլ խնդիր: Հետադարձ ակտիվ կապի միջոցով վերապատրաստող մասնագետը (ուսուցիչը) ուղղորդում է հետազոտական աշխատանք կատարող ուսուցչին: Ուղղորդում է, շտկում թյուրըմբռումները, մոտեցնում վերջնարդյունքին:	
8. 1. 8 8. 1. 9	Հետազոտություն պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա համար պահանջվող ժամանակը:	1	1	Կիմանա	
8. 1. 1 0	Ընդհանուր գաղափար հետազոտական աշխատանքի	1	1	հետազոտություն (ուսուցչի հետազոտական աշխատանք)	
8. 1. 1 1	մասին:				



8. 1. 1 2	Հետազոտական աշխատանք կատարելու քայլերը:		2	կատարելու ուղղորդիչ, զարգացնող դերը:	
8. 1. 1 3	Գործնական աշխատանք		1	Կարողանա սահմանել ուսումնական,	
8. 1. 1 4	Գործնական աշխատանք		1	մանկավարժական խնդիրները և առաջարկել հետազոտությամբ	
8. 1. 1 5	Գործնական աշխատանք		1	դրանց լուծման ուղիներ:	
8. 1. 1 6	Անփոփիչ թեստ		1	Հետազոտություն պլանավորելիս ձևավորել ժամանակի կառավարման կարողություն:	
8. 1. 1 7					
8. 1. 1 8					